ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

ՀՐԱՉՅԱ ՔԱՐՏԱՇՅԱՆ

Խորանաշատի ճարտարապետական համալիրը միջնադարյան Հայաստանի կառուցողական ոճի լավագույն հուշարձաններից է։ Այն գտնվում է ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Զինարի գյուղից մոտ 6,5 կմ արևելք, անտառապատ արևմտահայաց սարալանջի ոչ մեծ տափարակում՝ «հանդէպ Երգևանից բերդին ե ի Քիկանց Գարգմանայ»[1]։ Համակառույցը XIII դ. սկզբին հիմնադրել է մեծահամբավ Վանական Վարդապետը (1181—1251)[2]։ Մատենագրության մեջ համալիրի կառուցման վերաբերյալ վաղ հիշատակությանը հանդիպում ենք Կիրակոս Գանձակեցու մոտ[3]։ Հետագայում համալիրին անդրադարձած հեղինակների գործերում Խորանաշատի մասին խոսվել է խիստ հպանցիկ։ Դրանց մեծ մասում հուշարձանախմբի տեղադրությունը, ճարտարապետությունը, քվագրումը, առանձին վիմագիր արձանագրություններ և այլն ներկայացված են ակնհայտ վրիպակներով։ Հեղինակների զգալի մասը օգտվել է Գանձակեցու հաղորդած տեղեկություններից է. «Հայամավուրք» ժողովածուներում տեղ գտած Վանականի վարքագրությունից, Ս. Բարխուդարյանի «Արցախում» բերված նյութերից[4] (Ղ. Ինճիճյան[5], Ս. Ջալալյանց[6], Կ. Կոստանյանց[7], Քաջիկյան[8], Հ. Ոսկյան[9] և այլք)։ Մասնագիտական տեսանկյունից համակառույցին հակիրճ անդրադարձել են Կ. Ղաֆադարյանը[10], Ա. Յակոբսոնը[11], Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը[12], Ս. Մնացականյանը[13], Ն. Տոկարսկին[14], Հ. Խալփախչյանը[15], Թ. Սկալեսեն[16],

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանի, Երևան, 1961, էջ 341։

2 Վանական Վարդապետի մասին տե՛ս Համազասպ Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922։

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 346—347։

4 Մակար Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 322—324, նույնի՝ Պատմություն Աղվանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 194—195։

5 Ղուկաս Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանյանց, Վենետիկ, 1822, էջ [illegible]—314, նույնի՝ Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյանց աշխարհի, հ. 3, Վենետիկ, 1835, էջ 213։

6 Սարգիս Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տրփղիս, 1822, էջ 161—162։

7 Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 62—63, նույնի՝ Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 59, 62, 63, 65։

8 «Արձագանք», 28. II. 1888, էջ 87—88։

9 Համազասպ Ոսկյան, նշվ. աշխ., էջ 7, նույնի՝ Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 148—160։

10 Կարո Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին (Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 173—174)։

11 А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, с. 116.

12 В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, с. 63.

13 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 9, 15, 21, 53, 60, 62, 63.

14 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1962, с. 11.

15 Հ. Խալփախչյան, Դպրոցներն ու գրատները միջնադարյան Հայաստանում («Էջմիածին», 1963, ԺԲ, էջ 24), նույնի՝ Гражданское зодчество Армении, 1971, с. 42, 113, 116, 118, նույնի՝ Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 413—418.

16 T. Scalesse, Il convento di Xorakert, ATTI, Primo Simposio Internazionale di arte Armena, San Lazzaro-Venezia, 1978, p. 620, 623, 639.

գ. Յոնեսկուն[17] և ուրիշներ։ Հուշարձանախմբի մասին դրել է նաև Վ. Վանյանը՝ խիստ կարճառոտ և սխալաշատ հոդվածով փորձելով տալ կառույցների նկարագրությունը[18]։

Համալիրին անդրադարձած հեղինակների մեծ մասը վանքի «Խորանաշատ» անունը կապում է գլխավոր եկեղեցու ավագ խորանի բազմախորշ կիսարոլորակ պատի հետ[19]։ Սակայն նկատենք, որ Անիի Մայր տաճարում (989—1001), Մարմաշենի (988—1029), Մակարավանքի (1205), Գոշավանքի ս. Գրիգոր (1237—1241), Վրացական ՍՍՀ-ում գտնվող Մցխեթի Սվետիցխովելու (1010—1029), Ալավերդու (XII դ.), Ջաուլի[20] և այլ համալիրների եկեղեցիներում նույնպես առկա է հարդարանքային այդ սկզբունքը, բայց դրանցից և ոչ մեկի անունը չի բխել այդ առանձնահատկություններից։ Հետևապես դժվար է, ելնելով շինության զուտ կառուցվածքային առանձնահատկություններից, հիմնավորել խնդրո առարկա հուշարձանախմբի անվան ծագումնաբանությունը։ Այս առումով արժեքավոր տեղեկություններ է թողել Կիրակոս Գանձակեցին։ Նա վկայում է, որ վանքն իր անունն «ընկալել» է մերձակայքում եղած բազում եկեղեցիներից (իմա՝ դրանց խորաններից)[21]։

Խորանաշատի վանական համալիրը բաղկացած է ս. Աստվածածին, ս. Կիրակի, ս. Ճգնավոր եկեղեցիներից, առաջինին կցված զավթից և շրջակայքում գտնվող այլ շինություններից, որոնց միայն ավերակներն են պահպանվել։

Ս. Աստվածածին եկեղեցին համալիրի գլխավոր շինությունն է, որն իշխող դիրք ունի հուշարձանախմբում և շրջակա միջավայրում։ Պատկանում է ժամանակին տարածում գտած գմբեթավոր դահլիճ տիպին և արտաքինից ուղղանկյուն (12,7×11 մ), ներքուստ իաչաձև հատակագծով, բեմի երկու կողմերում տեղադրված կրկնահարկ ավանդատներով կառույց է։ Եկեղեցու հիմնադրման ժամանակի մասին մատենագրական և վիմագրական աղբյուրներում ոչինչ չի վկայված։ Հայտնի է միայն, որ նրա արևմտյան մուտքը կառուցվել է 1211 թ.՝ ոմն Սերոբի ծախսերով։ Այդ մասին հիշատակություն կա նշված մուտքի վերևի մասում[22]։ Շինարարական մյուս վկայագրերը վերաբերում են 1216 և 1220 թթ., ըստ որոնց Վահրամ Կանաչոզեցին և Ավելդատ Սրտժեցին հոդացել են ավանդատներից երկուսի կառուցման ծախսը[23]։ Պետք է կարծել, որ եկեղեցու մուտքը չէր կարող առանձին կառուցվել. նրա հետ, անկասկած, զուգահեռաբար բարձրացվել են հարակից պատերը, հակառակ դեպքում շինարարական և կոնստրուկտիվ ընդունված սկզբունքները կխախտվեին։ Ելնելով այս հանգամանքից, ինչպես նաև նկատի ունենալով ճարտարապետական բարդ տարրերի առկայությունը (որմնասյուներ, հարդարանքային միջոցներ և այլն), պետք է պնդել, որ եկեղեցու շինարարությունը սկսվել է 1211 թ. առաջ։ Հայտնի է, որ Վանական Վարդապետը որպես Մխիթար Գոշի աշակերտ, նրա հետ մասնակցել է Լոռիի և Անիի 1204, 1205 թթ. ժողովներին[24]։ Այսպիսով, 1205 թ. որպես եկեղեցու կառուցման սկիզբ պետք է բացառել, քանի որ այդ ժամանակ Վանականը դեռևս աշակերտում էր Գոշին[25]։ Հետևաբար, եկեղեցին սկսել է կառուցվել 1206—1210 թթ. արանքում։ Ս. Ջալալյանը վրիպում է, երբ վանքի կառուցման սկիզ-

---

17 «Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու», հ. II, Երևան, 1978, էջ 322—329։

18 Վահան Վանյան, Շամշադինի հուշարձան-վանքերը («Էջմիածին», 1980, ԺԲ, էջ 46—48)։

19 Սարգիս Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 161, Մակար Բարխուտարյանց, Արցախ, էջ 322, В. М. Арутюнян, С. А. Сафарян, նշվ. աշխ., էջ 63, О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 414.

20 Wachtang Beridse, Edith Neubauer, Die Baukunst des Mittelalters in Georgien, Berlin, 1980, S. 114—119, Ill. 86.

21 Կիրակոս Գանձակեցի, էջ 346։ Այս հանգամանքի վրա ուշադրություն են դարձրել Ղ. Ինճիճյանը (Ղուկաս Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանյանց, էջ 313) և Հ. Էփրիկյանը (Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 202)։

22 Կարո Ղաֆադարյան, նշվ. հոդվ., էջ 173։

23 Նույն տեղում, էջ 174։

24 Կիրակոս Գանձակեցի, էջ 171, 178, «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 807։

25 Կիրակոս Գանձակեցի, էջ 178։

ոչ համարում է 1191 թ.[26], բանի որ Կյուրիկե IY-ի թողած արձանագրության համաձայն, Վանականը կոչված է «ի խամո շինող վանից»[27]։ Դա աներկբայորեն ապացուցում է, որ վանքը հիմնադրվել է այլ կառույցներից աղատ տեղում[28]։ Հ. Ոսկյանը իր հերթին, չլինելով հուշարձանախմբում, տեղյակ չի եղել Սերորի արձանագրությանը և օգտվել է Վահրամ Կանաչողեցու վիմագրից, որը և նրան հիմք է տվել կարծելու, թե եկեղեցին կառուցվել է 1216 թ.։ Նա միաժամանակ միտք է հայտնում, որ այն կարող էր կառուցվել նաև 1216 թ. առաջ, եթե Քաշիկյանը ճիշտ վերծանած լինի 1211 թվականը[29]։ Եկեղեցու կառուցման վերաբերյալ Հ. Ոսկյանի ոչ ճիշտ տեսակետը ընդունել է Կ. Մելիք-Օհանջանյանը[30]։ Ինչ վերաբերում է եկեղեցու կառուցման ավարտի ժամանակին, ապա դա նույնպես չի վկայված աղբյուրներում։ Այդ մասին ենթադրական տեղեկություններ ենք քաղում մյուս երկու շինարարական արձանագրությունների թրվականներից (1216 և 1220)[31]։ Հիմքեր չկան ենթադրելու, որ եկեղեցու կառուցումը քաղաքական կամ այլ պատճառներով ընդհատված եղած լինի, քանի որ Ջալալ էդ-Դինը Խորանաշատը ավերել է 1228/29 թ.[32]։ Պետք է ընդունել, որ եկեղեցու կառուցումն ավարտվել է ամենաուշը 1221 թ.։ Այդ կարծիքի օգտին է խոսում այն փաստը, որ արդեն 1222 թ. գավթի շինարարությունը սկսվել էր, որի մասին վկայում են նրա առաջին հարկի ավանդատների նշված թվակիր արձանագրությունները, իսկ գավիթը կից է եկեղեցուն։ Դա նշանակում է, որ 1222 թ. եկեղեցու շինարարությունն ավարտված էր։ Հայտնի է նաև, որ 1223—1224 թթ. եկեղեցին արդեն գործող էր։ Դրա ապացույցն են Խորանաշատում դրշագրված



Նկ. № 1 Խորանաշատ. ս. Աստվածածին եկեղեցու, գավթի և ս. Կիրակի եկեղեցու հատակագիծը։

26 Մարգիս Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 161։ Այդ սխալի վրա ուշադրություն են դարձրել Կ. Դաֆթարյանը (Կարո Դաֆթարյան, նշվ. հոդվ., էջ 174) և Հ. Ոսկյանը (Համազասպ Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 154)։

27 Կարո Դաֆթարյան, նշվ հոդվ., էջ 175։

28 «Խամ» բառի մեկնաբանությունը քննվող նշանակությամբ տե՛ս Ս. Ա. Ավդյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 319—322։

29 Համազասպ Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 154։ Իրականում Քաջիկյանը հրատարակել է Սերորի արձանագրությունը («Արձագանք», 28. II. 1888, էջ 88)։

30 Կիրակոս Գանձակեցի, առաջաբան, էջ ԺԴ։

31 Պետք է ենթադրել, որ 1220 թ. վերաբերում է ոչ թե ավանդատան կառուցմանը, այլ Սրտժեցու կողմից եկեղեցուն միաբանելու ժամանակին, որտեղ նա նշել է նաև կառույցին իր մատուցած ծառայության մասին։ Այդ ավանդատան շինարարությունը ևս, հավանաբար, սկսվել է մյուսի հետ՝ 1216 թ.։ Հակառակ դեպքում պետք է ընդունել, որ մինչև ավանդատների մակարդակը շինարարությունը տևել է ավելի քան 10 տարի, իսկ դրանցից վերև գտնվող համեմատաբար բարդ մասերը՝ գմբեթը, թաղերը, ավագ խորանի գմբեթարդը, տանիքները և այլն, որոնք շենքի ընդհանուր ծավալի ծանրակշիռ մասն են կազմում, կառուցվել են 1 տարում, որն անհավանական է։

32 Արտաշես Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքի և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 6, էջ 61), նույնի՝ Վահրամյանների իշխանությունը մոնղոլների տիրապետության օրոք (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 12, էջ 31—32)։

1223 և 1224 թվակիր հիշատակարաններով երկու ձեռագրերը[33], Ինչպես վկայում են գլխավոր եկեղեցու մի քանի արձանագրություններ այն նվիրված է ս. Աստվածածնին.

Եկեղեցու հյուսիսային և հարավային պատերի արևմտյան կողմերից դուրս են ընկած նիստավոր որմնամույթեր, որոնք ավարտվում են բարդ տրամատի խոյակներով։ Վերջինների շարունակությունը կազմող հորիզոնական գոտիները թաղերն անշրջապատում են ուղղահայաց պատերից, իսկ աչաք խորանի կիսագլանաձև մակերևույթը՝ գմբեթարդից։ Որմնամույթերը միմյանց հետ հաջորդաբար կապված են կիսաշրջանագծային կրկնակի կամարներով, որոնց ստեղծած քառակուսի հիմքից առագաստային փոխանցումների միջոցով բարձրանում է բոլորաձև կտրվածքով թմբուկը։ Նրա ստորին մասն ընդգծված է ճոխ նկարվածքի գոտիով։ Եկեղեցու ներքին տարածությանը բարձր գեղարվեստական արտահայտչականություն է հաղորդում ավագ խորանի կիսաբոլորակ պատի հարդարանքը։ Վերջինս դռգավոր հարթության ստորին մասի խորանիկներ հիշեցնող մշակումների շարք է (ընդամենը 12 խորանիկ)[34]։ Դրանք միմյանցից բաժանված են զույգ կիսասյուներով, որոնք կապված են որմնակամարներով։ Վերջիններս խորանիկներին տալիս են կամարակապ վերջավորություններ՝ միաժամանակ պարփակելով դրանց շքաքարային ավարտամասերը։ Դրանք պսակված են դլանիկային ձևափոխումներով նկարված անկյունակների անընդհատ շղթայով։ Եկեղեցու բեմի ճակատային հարթությունը մշակված է եղել քառաթև սրածայր վեցանկյունների և քառակուսի քարերի որոշակի համադրությամբ ընդելուզումներով (այժմ դրանց քիչ մասն է պահպանվել)։ Քարերն ունեցել են բնական տարբեր երանգավորումներ։ Իր մշակմամբ հատկապես հետաքրքրական է ա-

Նկ. № 2 ս. Աստվածածին եկեղեցին արևելքից։ Բևմտյան մեծ թաղը, որի կենտրոնական մասում, որպես հանգուցաքարեր, ագուցված են 4 զույգ կեռխաչ՝ տեղադրված երկու շարքով։ Ցուրաքանչյուր կեռխաչ բաղկացած է 4 Г-տձև քարից, որոնք մեկումեջ սև կամ սպիտակ են։ Որպես հավերժության նշանների տարատեսակ, Ճիշտ նման սկզբունքով, սակայն այլ նկարվածքով կեռխաչեր կան Անիի սմբատյան պարիսպների վրա[35]։ Կասկած չմնենալով, որ դրանք ստեղծվել են պարիսպների հետ միաժամանակ (համենայնդեպս գոյություն են ունեցել մինչև XIII դ. սկիզբը, երբ Զաքարյանները զարկ էին տվել դեռևս XI դ. սկսված պարիսպների վերականգնման աշխատանքներին[36]), կարող ենք ընդունել, որ դրանցից ուղղակիորեն բխել է խորանաշատի քննվող հարդարանքային ձևը (նկատենք, որ այդ սկզբունքը հայտնի է եղել նաև Դվինում՝ իրականացված թրծակավե սալերի վրա[37])։ Խորանաշատում կեռխաչերը ստացել են նոր մեկնաբանություն։ Դրանք հարդարանքային միջոց լինելուց զատ, ունեն նաև կոնստրուկտիվ նշանակություն։ Այստեղ նորույթ է կեռխաչերը շարքերով ներկայացնելու ձևը, որի ակնհայտ կրկնությունն է Շրխ-

---

33 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2101, 4823։

34 Ենթադրվում է, որ հարդարանքային այդ սկզբունքը հանդես է եկել IX—XI դդ. մի շարք կառույցներում (Ս. Խ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, Երևան, 1982, էջ 116)։ Հ. Խալփախչյանը կարծում է, որ այն սկզբնավորվել է Սանահնի Ամենափրկիչ եկեղեցում (О. Х. Халпахчьян, Санаин, М., 1973, с. 29, նույնի՝ Творческие методы древнеармянских зодчих на примере памятников Санаина («Архитектурное наследство», М., 1974, № 22, с. 83).

35 „Ani documents of armenian architecture" № 12, Milan, 1984, Ill. 57, 38.

36 Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 45—48։ Ենթադրվում է, որ այդ կեռխաչերը քաղաքի տարբեր մասերի զինանշաններ են եղել («Ani, documents of armenian architecture" № 12, p. 76, 101):

37 Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 135։

ժուրաբ վանքի (Շամշադինի շրջանում) գլխավոր եկեղեցու (XIII դ. երկրորդ կես) բեմի ճակատային մասի հարդարանքը։

Եկեղեցու ներքին տարածքը լուսավորվում է 12 պատուհանով, որոնցից ավագ խորանի մեջ բացվողը զույգ է, իսկ դրմնամույթերով պարփակված արևմտյան մասերինը՝ շրջանաձև։ Լուսամուտներից վեցը գտնվում է թմբուկի վրա։ Դրանք ուշագրավ են իրենց դասավորությամբ՝ երկրի հիմնական առանցքների նկատմամբ մոտ 0,5 մ տեղաշարժված են արևելք-հարավ, արևմուտք-հյուսիս ուղղությամբ։ Հորիզոնական հարթության մեջ բացվածքների ոչ մեծ պտույտը կառուցողական շեղում չպետք է ընդունել։ Դրա շնորհիվ լուսամուտներն արևի նկատմամբ ավելի նպաստավոր դիրք են ստացել՝ ապահովելով լույսի առավել ներթափանցումը եկեղեցի։

Եկեղեցին արտաքինից առանձնանում է ճարտարապետական հստակ լուծումներով և հարդարանքային ինքնատիպ միջոցներով։ Բացի արևմտյանից, մնացած ճակատներում այն ունի երկուական խորշեր։ Դրանք ունեն միատեսակ աստիճանաձև անցումներով կտրվածք, որն ակնհայտորեն աղերսվում է Անիի Մայր տաճարի համանման խորշերի հետ (Մարմաշևի գլխավոր եկեղեցու խորշերը ևս իրականացված են այդ սկզբունքով)։ Ենդրո առարկա եկեղեցու շուրջ բոլորն անցնում է բարդ տրամատի անընդհատ գոտի, որը զանազան ձևափոխումներով (պահպանելով տրամատը) խորշերի համար ծառայում է որպես կիսաշրջան պսակներ, իսկ ճակատների կենտրոնական մասերում վեր է ածվում խոշորաչափ, տարբեր նկարվածքներով խաչերի։ Գոտին տեղադրված է այնպիսի մակարգակների վրա, որ անցնում է միաթեք լանջերի տակով՝ դրանց հարար ծառայելով որպես քիվեր։ Կառույցը բոլոր կողմերից գոտեորելու նշված սկզբունքի արժատները նկատելի են դեռևս վաղ միջնադարում կառուցված որոշ շենքերի վրա, որոնք իրենց հերթին անտիկ ճարտարապետական ձևերի ծնունդ են և ապա՝ հայկական շինարարական արվեստի բնորոշ գծերից մեկը[38]։ Նկատենք, որ հայկական ճարտարապետության բոլոր փուլերում գոտիները մեծ մասամբ կիրառվում էին հատվածաբար (բացառությամբ ուշ միջնադարյան որոշ շինությունների)՝ որպես կառույցների բացվածքների կամ խորշերի պսակներ։ Եթե Տեկորի տաճարում այն շրջանցում էր բոլոր պատերը (բացի արևելյանից, որի ելուստավոր ծավալները, ինչպես ենթադրվում է, ավելացվել է հետագայում[39]), ապա Թալինի մեծ և Սիսավանի եկեղեցիներում (VII դ.), Արուճի և Շիրակավանի տաճարներում (VII դ.), Տաթևի Պողոս-Պետրոս և Աղթամարի եկեղեցիներում (X դ.), ինչպես նաև զարգացած միջնադար։ մի շարք կառույցներում (Նոր Վարագավանք, Շիմուրաղ, Հառիճավանք, Հաղարծին և այլն) գոտիներն անընդհատ չեն է հարդարում են առանձին ճակատները։ Գոտիներն ամբողջական տեսքով հանդես են գալիս Անիի Արուղամբենց (ս. Գրիգոր, X դ.) և Մակարավանքի փոքր եկեղեցու (ս. Աստվածածին, 1198 թ.) բոլորակ արտաքին մակերևույթին։ Սակայն խորանաշատի դիտարկվող ճարտարապետական տարրն էապես տարբերվում է մնացած բոլոր հուշարձաններում կիրառված համանման ձևերից. այն արտահայտվում է ինչպես կառույցին գոտու հաղորդած կերպարային ինքնատիպության, այնպես էլ որպես քիվ նրա ունեցած գործառական նշանակության մեջ։ Այս վերջին հանգամանքն իր նախօրինակն ունի Կեչառիսի գլխավոր եկեղեցու (1003) արևելյան ճակատի հարդարանքային ձևերում, որտեղ, սակայն, գոտու և քիվի հարաբերակցությունը պայմանավորում է պատի հարթության զուտ կերպարային հատկանիշներից մեկը միայն (գոտին և քիվն ունեն տարբեր տրամատներ և միայն ընդհանուր նկարվածքով է, որ ընկալվում են ամբողջական, որպես միմյանց շարունակություն)։ Քննվող եկեղեցու արևելյան ճակատի զույգ լուսամուտից (որն ունի շքեղ երեսակալ) վերև, խաչի ստորին թևի կիսաշրջանաձև հիմքի մեջ ներկայացված է ճանկերով որս բռնած թևատարած արծվի պատկերաքանդակ, որն աչքի է ընկնում պատկերման հստակությամբ և զուրկ է քանդակային մանրամասնություններից։ Հետաքրքիր է, որ ի տարբերություն նույն թեմատիկայով պատկերաքանդակների, որտեղ արծիվների որսը սովորաբար որևէ հեզ կենդանի է՝ ոչխար (Գեղարդում, Մակարավանքի գավթում, Անիի սալատական եկեղեցու որմնասյուներից մեկի խոյակին), եղնիկ (Նորավանքում), նապաստակ (Քուչախի Բագրատի տաճարի հարավային սրահի արևմտյան սյան խոյակին) և այլն, խորանա-

---

38 Վ. Մ. Հարությունյան, Անտիկ ավանդույթների ժառանգորդությունը միջնադարյան հայ ճարտարապետության մեջ («Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 4, էջ 17), Т. А. Измайлова, Связи архитектурного декора грузинских и армянских памятников XIII века («IV международный симпозиум по грузинскому искусству», Тбилиси, 1983, с. 1).

39 Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 10—37։

շատում արծվի ձանկերում գիշատիչ կենդանի է պատկերված՝ գայլ կամ հովազ, որն ակներև է ինչպես նրա բաց երախից և ճկուն ու ջլապինդ մանրամասներից, այնպես էլ վերջավորությունների կազմախոսությունից (առջևի ոտքերը ծնկահոդից ծալված են դեպի վերև)[40]։ Խորանաշատի արծվաձանդակը մշակման ընդհանուր գծերով հիշեցնում է Անիի Մայր տաճարի հարավային ճակատին տեղադրված երկու միանման արծիվների պատկերաքանդակները։

Եկեղեցու ճակատների նշված գոտիով կազմավորված խաչերից արևելյանն ուղղաթև է, իսկ հյուսիսայինը և արևմտյանը՝ գեղարդաձև, որոնք ընկալվում են որպես յուրատեսակ խոշոր ծաղկապատկերներ (հարավային ճակատի խաչից պահպանվել է միայն ստորին հատվածը)։ Ճակատների յուսասուտներն ունեն գոտու տրամատը հիշեցնող ուղղանկյուն շրջանակներով երեսակալներ և հիշյալ խաչպատկերների հետ դտնվում են հորինվածքային փոխկապվածության մեջ։ Եկեղեցու մուտքերն ունեն միանման հորինվածք՝ բնորոշ XII—XIV դդ. հայկական աշխարհիկ և կրոնական կառույցների մուտքերին[41]։ Արտաքուստ դրանք եզերված են ուղղանկյուն քանդակազարդ շրջանակներով, իսկ բուն բացվածքները՝ նուրբ կիսասյուներով։ Բարավորները հարդարված են հյուսիսայինում՝ քառաթև և շեղաձև, իսկ արևմտյանում վեցաթև աստղերի տեսքով բարերի ընդելուզումներով՝ պահպանելով գունային ընտրությունը (կանաչ և կարմիր)։ Եկեղեցու թմբուկը շրջառում են բարդ տրամատի եզրավորումներով 12 որմնակամարներ, որոնցում մեկումեջ բացված են նեղ ու ձիգ պատուհանները։ Այն նման հարդարանքով մյուս հուշարձաններից (Տիգրան Հոնենցի ս. Գրիգոր, Գեղարդի, Մակարավանքի, Հաղարծինի և այլ համալիրների եկեղեցիներ) տարբերվում է որմնակամարների խորաքանդակ ձևի ընտրությամբ, որի շնորհիվ գմբեթի զանգվածը զգալիորեն փոքրացել է։ Դա, անկասկած, դրական է անդրադառնում կառույցի կոնստրուկտիվ աշխատանքի վրա։ Թմբուկը համաչափական կառուցվածքով և ճարտարապետական հարդարանքով համահնչուն է շինության մյուս ծավալների հետ։

Դավիթը կից է գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին և պատկանում է կենտրոնական հորինվածքով 4 սյունանի գավիթների տիպին։ Այն ուղղանկյուն հատակագծով (16,8×16 մ), արևելյան կողմում տեղադրված երկու կրկնահարկ ավանդատներով, արտաքուստ ճակտոններով լուծված կառույց է։ Գավթի հիմնադրման մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել։ Սակայն, ելնելով մի շարք տվյալներից, կարող ենք պնդել, որ նրա կառուցումը սկսվել է եկեղեցու շինարարության ավարտից անմիջապես հետո։ Այդ են վկայում գավթի առաջին հարկի ավանդատների բարավորների 1222 թվակրով արձանագրությունները, որոնցից հարավ-արևելյանինը շինարարական բնույթի է։ Ահա այն. ԵՍ ՍԱՀՂՈՄՈՆ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ՎԱՆՍ ԽՈՐԱՆԱՇԱՏՈ ԵՒ ԵՏՈՒ ՁԵԱԽՍ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՀԱՍՏԱՏԵՑ Բ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԱՒԱՔԵՀՈՑՆ ՊԱՀՂՈՍԻ ՈՀԱ (1222)[42]։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ գավիթը ևս կառուցել է Վանական Վարդապետը[43]։ Այս կառույցի վերաբերյալ որոշ հեղինակներ առաջ են քաշել թյուր տեսակետներ։ Հ. Խալփախչյանը, վկայակոչելով Կ. Սարդսյանի այն հաղորդումը, որ իբր այստեղ նախապես գոյություն է ունեցել այլ կառույց՝ «գավիթ», որը եղել է կամարակապ և թաղածածկ՝ եկեղեցու արևմտյան ճակատին հպված երկայնական սրահի տեսքով շենք, և որը հետագայում վերափոխելով դարձրել են «ժամատուն»[44], գրել է, որ այժմ հնարավոր չէ պատկերացում կազմել այդ «նախնական շինության» ձևերի մասին[45]։ Այդ կարծիքը հերքվում է ինչպես գավթի նշված ավանդատան շինարարական արձանագրությամբ, այնպես էլ կյուրի-

---

40 Ս. Խ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 193), Մուրադ Հասրաթյան, Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 8, էջ 63—64)։ Ա. Ի. Շահնազարյանը մեզ հայտնեց, որ խնդրո առարկա պատկերաքանդակը հանդիսացել է Վահրամյանների իշխանական տոհմի զինանշանը։

41 Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, с. 278.

42 Արձանագրությունը վերցրել ենք Պատմհուշ վարչության արխիվից (ՊՊ. № 1422, թ. 57)։

43 Կիրակոս Գանձակեցի, էջ 346—347։

44 Նկատենք, որ «գավիթը» և «ժամատունը» նույնանշանակ են (Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, գ. 1, Երևան, 1942, էջ 155, 163, С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, с. 18—22)։

45 Հ. Խալփախչյան, Դպրոցներն ու գրատները միջնադարյան Հայաստանում («Էջմիածին», 1963, ԺԲ, էջ 24), նույնի՝ Гражданское зодчество Армении, с. 113.

կե IV-ի թողած վիմագիր վկայությամբ, ըստ որի, ինչպես տեսանք, Խորանաշատը հիմնադրվել է այլ կառույցներից ազատ տեղանքում։ Բացի այդ, շինության վիմագրերի մեծ մասում (այդ թվում նաև արևմտյան կողմի, որոնք իբր հետո են ավելացվել) առկա է Վանականի անունը, որը ցույց է տալիս, որ գավիթը սկզբից ևեթ եղել է միասնական կառույց։

Գավթի հիմնարկումից հետո նրա շինարարությունը, ամենայն հավանականությամբ, շարունակվել է 5—6 տարի և ընդհատվել 1228/29 թ., երբ խորեզմաշահ Ջալալ էդ-Դինը ավերել է Խորանաշատը։ Գավթի շինարարությունը շարունակվել է 1230-ական թվականների երկրորդ կեսին, մոնղոլական գերությունից Վանականի ազատվելուց հետո։ Եկեղեցու ներքուստ հարավային պատի արձանագրությունից[46] պարզվում է, որ 1251 թ. գավթում դեռևս շարունակվել է շինարարությունը (այդ թվականին Արճեշ գավառից ոմն Սահփանոս օժանդակել է գավթի կառուցմանը)։ Սակայն պետք է կարծել, որ այդ ժամանակ գավթի կառուցումն արդեն ավարտված էր, քանի որ Վանականը վախճանվել է նույն՝ 1251 թ.[47], իսկ պատմիչի վկայությամբ նա դասերն անց է կացրել այդտեղ[48]։ Ստեփանոսի տրամադրած միջոցները հավանաբար օգտագործվել են գավթի ներքուստ արևմտյան պատի վերակառուցման նպատակով։

Գավթի կենտրոնական մասում գտնվում են 4 միակտոր քարե սյուներ, որոնք միմյանց և հանդիպակաց որմնասյուների հետ կապված են կամարներով։ Վերջինների վրա հենված են ծածկի թաղերը և երդիկային բացվածքով կենտրոնական ծածկը։ Սյուներից արևմտյան երկուսը փնջաձև են, ունեն վեցական կիսասյուներ՝ հար և նման Հաղարծնի գավթի (XII դ. վերջ) արևելյան զույգ սյուներին։ Գավթի ավանդատների մոտ՝ եկեղեցու արևմտյան մուտքի աջ և ձախ կողմերում, տեղադրված են երկու բարձր պատվանդաններ։ Դրանք, ի տարբերություն այլ կառույցների համանման ձևերի (Հովհաննավանք, Սաղմոսավանք, Դեղարդ և այլն, որոնց վրա խաչքարեր են ցուցադրված), նախատեսվել են երկրորդ հարկի ավանդատներ բարձրանալու համար։ Պատվանդանների մոտ հավանաբար եղել են շարժական սանդուղքներ (այդպիսիք պահպանվել են Կեչառիսի, Գոշավանքի գավիթներում և այլուր)։

Գավթի ներքին ճարտարապետական հորինվածքի և կերպարի ստեղծման մեջ էական դեր ունեն արևմտյան պատի հարդարանքը և կենտրոնական ծածկի կառուցվածքային ձևերը։ Արևմտյան պատը եկեղեցու ավագ խորանի օրինակով պատված է 12 գեղակերտ խորշերով՝ վեցը մուտքից աջ, մյուս վեցը՝ ձախ։ Դրանք գետնահար, շթաքարևրով ավարտված և գլանիկավոր շրջանակներով եզերված (վերևում կամարային անցումներով), եկեղեցու համանման տարբեր հիշեցնող խորանաձև կերտվածքներ են։ Վերջիններիս վերևով անցնում է ոչ բարդ տրամատով գոտի, որը, երկկենտրոն շրջագծի վերածվելով, եզերում է մուտքի բարավորը։ Նշված պատը, ինչպես և դրանից դեպի սյուները ձգվող կամարները, լրացուցիչ շարվածք են։ Մուտքի բարավորին պատկերված է հավերժության նշան (կիսագնդի վրա), իսկ դրանից վերև՝ պատին ագուցված պատվանդանին, երկու առյուծի և մարդու պատկերաքանդակ է։ Առյուծները ծավալաքանդակ են՝ նստած վիճակում։ Մարդը, որը պատկերված է նրանց արանքում, ներկայացված է հարթաքանդակային ձևով։ Նա ամբողջ հասակով է, հագին՝ շքեղ պարեգոտ, իսկ ձեռքերով բռնել է կենդանիների պարանոցներից կապված պարաններից։ Բոլոր ֆիգուրների հայացքներն ուղղված են դեպի արևելք։ Այս պատկերաքանդակը մեր խորին համոզմամբ Հին Կտակարանի «Դանիելը առյուծների գրում» սյուժեի արտացոլումն է[49], որը լայն տարածում էր գտել վաղ միջնադարյան քանդակագործության մեջ[50]։ Նույն բովանդակությամբ մյուս պատկերագրություններից, որոնք բացառապես ներկայացված են հարթաքանդակային ոճով[51], խնդրո առարկա բանդակը տարբերվում է իր խորաքանդակային ձևերով։ Այս թեման, անշուշտ, կապված է խորհրդապաշտական որոշակի գաղափարախոսության հետ, որը կայանում է Դանիելի մասին.

---

46 Կարո Ղաֆադարյան, նշվ. հոդվ., էջ 175։

47 Կիրակոս Գանձակեցի, էջ 344—348։

48 Նույն տեղում, էջ 346—347։

49 «Գիրք Աստվածաշունչք Հին և Նոր Կտակարանացդ», Վենետիկ, 1860, էջ 890, 897։

50 Լևոն Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 81։

51 Նիրարփի Տեր-Ներսիսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 35, Լևոն Ազարյան, նշվ. աշխ., էջ 82, Սուրեն Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 137, 153 և, Н. А. Аладашвили. Монументальная скульптура Грузии, М., 1977, с. 48, 52.

ալանդագրությունը որպես փրկության, օտար նվաճողների դեմ պայքարի խորհրդանիշ[52] դիտելու մեջ։

Իրենց հորինվածքով եզակի են նաև դավթի հյուսիսային և հարավային կենտրոնական թաղերի հանդուցաքարերից կախված թևատարած ճախրող խաչորաչափ արծվի (հյուսիսային թաղ) և բացված երախով ու կիսով չափ դուրս հանած լեզվով օձի գլխի (հարավային թաղ) ծավալանդակները։

Հատկապես հետաքրքրական է դավթի կենտրոնական մասի ծածկը։ Կամարների ստեղծած քառակուսի հիմքը վահանաձև առագաստների միջոցով վեր է ածված 12-կողանի բազմանկյան, որն իր հերթին եռանկյունաձև և սեղանաձև քարերի հնարամիտ դասավորությամբ մի փոքր վերևում դարձել է 24-կողանի հիմք։ Վերջինից յուրաքանչյուր 4 կողը մեկ դուրս են շեշտված շթաքարային հարդարանքով եռանկյունաձև հենարաններ (ընդամենը 6 հատ), որոնց վրայից սկսընավորվող զույգ կամարները փոխհատվելով՝ ստեղծում են վեցանկյուն բացվածքով երդիկ։ Վերջինը պսակված է եղել երկշարք շթաքարերով։ Հյուսածո ջլաղեղային այդ համակարգը կառույցի ներքին տարածքին հաղորդում է գեղարվեստական բարձր արտահայտչականություն, միաժամանակ ապահովելով նրա կոնստրուկտիվ կայունությունը (այդ թվում նաև հակաերկրաշարժային)[53]։ Հորինվածքային այս սկզբունքը կիրառվել է Նեղուցի վանքի (XIII դ.) և Մակարավանքի գավիթներում, ինչպես նաև Խորակերտի եկեղեցու գմբեթում։ Քննվող ջլակամարների կառուցվածքային ձևերը բխել են ժողովրդական շինարարական արվեստի ավանդույթներից[54]։ Հարկ է նշել, որ փոխհատվող կամարների նման համակարգը բնորոշ է եղել արաբական ճարտարապետությանը, ինչպես նաև Լոմբարդիայի և Նորմանդիայի ռոմանական մի շարք եկեղեցիներին[55]։ Սակայն Խորանաշատի գավիթը դրանց հետ ոչ մի առնչություն չունի, քանի որ, ինչպես նկատել է Ս. Մնացականյանը, այդ հուշարձաններից և ոչ մեկում այն կոնստրուկտիվ նշանակություն չունի, այսինքն՝ դրանցում բացակայում է այն արխիտեկտոնիկան, որն առկա է Խորանաշատում։ Հետագայում հայկական ճարտարապետության մեջ այդ սկզբունքը կիրառություն է գտել XIX դ. ս. Հովհաննես եկեղեցու (Իրան) գմբեթում, որտեղ փոխհատվող կամարներն ուղղակի են։

Նկ. № 3 Գավթի արևմտյան մուտքը։

Արտաքուստ նույնպես գավիթը մշակված է ուրույն հարդարանքային ձևերով, որոնք գլխավորապես բաշխված են արևմտյան ճակատի կենտրոնական ուղղահայաց առանցքի շուրջը։ Ուշադրավ է հատկապես նույն ճակատի շքամուտքը, որն իր հորինվածքով և քանդակային հարդարանքով եզակի է հայկական համանման ճարտարապետական ձևերի մեջ։ Այստեղ կիրառված չէ ժամանակին լայն տարածում գտած ուղղանկյուն շրջանակը։ Այն եզրավորված է տրմնակասարային ավարտվածք ունեցող զույգ գլանիկներով իրականացված երեսակալով (նրա հետ հորինվածքային որոշ ընդհանրություններ ունի Հաղպատի վանքի Համազասպի գավթի շքամուտքը)[56]։ Միակտոր սպիտակ քարե բարավորի երկկենտրոն կորվածքը ընդգծված է կանաչավուն, երկշերտ շթաքարային փորվածքներով։ Մուտքի բուն բացվածքի եզրերում տեղադրված են բա-

52 Ս. Խ. Մնացականյան, նշվ. հոդվ., էջ 125։

53 «Всеобщая история архитектуры», т. 3, Л.—М., 1966, с. 264.

54 Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության ձևաստեղծումների ժողովրդական ակունքները («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 67)։

55 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, с. 86—87; «Всеобщая история архитектуры», т. 8, М., 1969, с. 79, 94—95.

56 «Всеобщая история архитектуры», т. 3, с. 268.

բակիրան զույգ որմնասյուներ, որոնք խոյակների փոխարեն պսակված են առյուծի (հյուսիսակողմյան) և եղան (հարավակողմյան) ձավալաքանդակներով։ Դրանք գտնվում են մուտքի բացվածքի վերին երկու անկյուններում՝ հայացքներով ուղղված դեպի արևմուտք։ Երկուսն էլ քանդակված են նստած վիճակում։ Առյուծի քանդակը լավ է պահպանվել։ Նրա գլուխը գնդաձև է, հոնքերը՝ աղեղնաձև, միացած իրար և քթի վերնամասին։ Աչքերը քթի մոտ կիսագնդաձև են և ունեն հոնքերին զուգահեռ, սրածայր վերշավորությամբ նկարված։ Այտերը և երկատված շրթունքներն ուռուցիկ են։ Վերջինից ներքև կիսարաց, ընդգծված ժանիքներով երախն է։ Եղան գլուխը բավականին հողմնահարված է։ Դրանցից պահպանվել են աչքերը և հոնքերի մնացորդները։ Ուշադրություն է դարձված կենդանիների կազմախոսական առանձնահատկություններին։ Եթե առյուծի առջևի վերշավորությունները ծնկահոդից ծալված են դեպի առաջ, ապա եղան մոտ դեպի ետ են պատկերված (դա վկայում է, որ այն, իրոք, եղջերավոր կենդանի է)։ Այս երկու պատկերաքանդակները, շքամուտքին հաղորդելով գեղարվեստական բարձր արտահայտչականություն, միաժամանակ բարավորի համար հենարաններ են (դրանց մարմինների բեռի տակ գրտնվող հատվածները կարծես մի փոքր ճկվել են, իսկ ուսաթիակները, որոնք դուրս են բարավորից, շեշտված են դեպի վերև. առյուծը պատկերված է լայն թիկունքով և բարակ որովայնով, իսկ եղան մոտ այդ տարբերությունն անհամեմատ քիչ է)։ Դրանք, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Մնացականյանը, պահպանիչ խորհրդանշաններ են[57] (վերոհիշյալ թաղերից կախված արծվի և օձի պատկերաքանդակները՝ նույնպես)։ Նույնարովանդակ պատկերաքանդակներ են հանդիպում Գանձասարում, Սելիմի կարավանատունը, Եղվարդի եռահարկ եկեղեցում, Օկշի եկեղեցում (Վրացական ՍՍՀ)[58] և այլ հուշարձաններում, որոնք, սակայն, իրականացված են հարթաքանդակային սկզբունքով, որոնցից խնդրո առարկա պատկերաքանդակներն էապես տարբերվում են։

Արևմտյան ճակատի հարդարանքը լրացված է շքամուտքից վերև համաչափ տեղադրված միանման բարձրաքանդակ կորաթև խաչպատկերներով և երկու խաչքարերով, որոնք առանձնանում են իրենց հորինվածքով։ Դրանցից մեկի եզրերում զույգ կիսասյուներ են՝ կապված որմնակամարով, իսկ մյուսն ունի միատեսակ կտրվածքով ուղղանկյուն եզրակալ։ Պատին ագուցված են խաչապատկերներ ունեցող այլ քարեր, որոնք նշվածների հետ միասին շեշտվածության նպատակով իրականացված են բացառապես սպիտակ քարատեսակներով։ Գավթի հյուսիսային և հարավային ճակատներն ունեն անհամեմատ զուսպ լուծումներ։ Դրանց աշխուժությունն են հաղորդում մեկական պարզաձև լուսամուտները և ճակտոնների վերնամասերի քանդակաձևերը, որոնցից հարավայինը վարդյակաձև արևի ժամացույց է, իսկ հյուսիսայինը, նկատի ունենալով լուսաստվերային խաղի բացակայությունը, կիսագնդի վրա իրականացված հավերժության նշան է (հար է նման մուտքի բարավորի քանդակին), որն այժմ ընկած է։

Գավթի ծավալատարածական հորինվածքն ավարտվում է կենտրոնական մասում տեղադրված ութանիստ թմբուկով և այն պսակող երդիկային բացվածքով վեղարաձև ծածկով։

Ս. Կիրակի եկեղեցին գտնվում է ս. Աստվածածնից 4 մ հարավ։ Այն ուղղանկյուն հատակագծով (արտաքինից 4,3×3 մ), գմբեթավոր կառույց է։ Նրա կառուցման վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել։ Սակայն երնելով Կիրակոս Գանձակեցու մի վկայությունից, որտեղ նա ընդգծում է, որ գավիթը կառուցվել է «ի դուռն մեծ եկեղեցւոյն»[59], կարող ենք ընդունել, որ այդ ժամանակ գոյություն ուներ նաև փոքր, այսինքն ս. Կիրակի եկեղեցին։ Ելնելով նրա ճարտարապետական ձևերից, կարելի է կարծել, որ այն կառուցվել է XIII դ. սկզբին և, հավանաբար, հանդիսացել է Գանձակեցու վկայած «հոլով» եկեղեցիներից մեկը[60]։ Շինության անվան վերաբերյալ ևս հիշատակություններ չեն պահպանվել։ Հայտնի է միայն, որ մոտ 100 տարի առաջ ևս այն կոչվել է ս. Կիրակի[61]։ Հավանաբար, այդ անվանումը կառույցը կրել է ի սկզբանե։

Ներքուստ եկեղեցու չորս անկյուններով բարձրանում են զույգ որմնասյուներ, որոնցից ձգվող կամարներին առագաստային փոխանցումների օգնությամբ հենված է գլանաձև թմբուկը։ Ուշագրավ է կառույցի արտաքին հարդարանքը։ Չնայած սրբատաշ քարերը մեծ մասամբ բացակայում են (արտաքուստ), այդուհանդերձ պահպանված մասերը հնարավորություն են ընձեռում վերականգնել նրա ճակատների ճարտարապետական տեսքը։ Ճակտոններ և միաթեք լան-

57 Ս. Ա. Մնացականյան, նշվ. հոդվ., էջ 200։

58 Նույն տեղում, էջ 200, Н. А. Аладашвили. նշվ. աշխ., էջ 118—120։

59 Կիրակոս Գանձակեցի, էջ 347։

60 Նույն տեղում, էջ 346։

61 Մակար Բարխուդարյան, Արցախ, էջ 334։

ներ ունեցող պատերից արևմտյանում գտնվում է ուղղանկյուն շրջանակով և քանդակազարդ երեսակալով շքամուտքը։ Մնացած ճակատների կենտրոնական մասերով բարձրանում են զույգ կիսասյուներ, որոնք արևելյան և հարավային ճակատներում միացած են լուսամուտների ուղղանկյուն շրջանակներին[62] (հյուսիսայինում, որտեղ լուսամուտ չկա, կիսասյուներն ավարտվում են ուղղաթև խաչով, որին նախորդում է կորաթև խաչպատկեր)։ Ճակատների եզրերով բարձրանում են միայնակ կիսասյուներ։ Հետաքրքիր են դրանց ավարտական մասերի լուծումները։ Կառույցի փոքր չափերից և կերպարային առանձնահատկություններից կախված, որմնակամարներով միմյանց հետ կապված են ոչ թե նույն, այլ հարակից ճակատների համապատասխան անկյուններին մոտ գտնվող կիսասյուները, որի շնորհիվ հարդարանքային միջոցները հարթությունների վրա բաշխվել են հավասարաչափ՝ կառույցին հաղորդելով հավաք տեսք։ Համանման լուծումներ ունեն նաև Գոշավանքի ս. Գրիգոր (XIII դ.) և Դեղձուտի (XIII դ.) եկեղեցիների անկյունային մասերը։ Ս. Կիրակին տեղադրված է բարդ կտրվածքի բարձր գետնախարսխի վրա։

Վերոհիշյալ երեք հուշարձանները շրջապատված են կոպտատաշ քարերով առանց շաղախի շարված պարսպապատերով, որոնք, հավանաբար, հետագա ժամանակների գործ են։ Կառույցների շրջակայքում գտնվում են անարձանագիր տապանաքարեր։ Եկեղեցիներից ս. Աստվածածինը ենթարկվել է վերանորոգման, որի մասին վկայում են առանձին հատվածների աղյուսով կատարված վերաշարերը։ Մեր կարծիքով, այդ նորոգումներն իրականացրել է XVII դ. վերջին քառորդում Խորանաշատի եպիսկոպոս Հովհաննեսը, որը հայտնի է իր շինարարական գործունեությամբ[63]։

Ս. Ծզնավոր եկեղեցին գտնվում է պարսպից մոտ 150 մ արևելք։ Ներկայումս կիսավեր վիճակում է, սակայն պահպանված բազմաթիվ ճարտարապետական բեկորները ցույց են տալիս, որ այն հատակագծային (արտաքինից՝ 4,7×3,4 մ) և ծավալատարածական հորինվածքով նման է եղել ս. Կիրակի եկեղեցուն։ Ս. Ծզնավորի շրջակայքում կան մի քանի տապանաքարեր, որոնք վկայում են, որ այստեղ գերեզմանոց է եղել։ Կառույցի մասին վաղագույն հիշատակությունը բերել է Կիրակոս Գանձակեցին։ Նկարագրելով Վանական Վարդապետի հուղարկավորության տեսարանը, պատմիչը գրում է. «Եւ տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն յարեւելից կուսէ, մօտ ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանք աղքատացն, զի ինքն այդպէս հրամայեաց»[64]։ Պատմիչի տեղեկությունները վերաբերում են 1251 թ., ուրեմն այդ ժամանակ ս. Ծզնավոր եկեղեցին արդեն գոյություն ուներ։ Նրա հիմնադրման վերաբերյալ դատողություններ անելով ս. Կիրակիի օրինակով, կարող ենք պնդել, որ այն նույնպես կառուցվել է XIII դ. սկզբին։

Կառույցի հարդարանքային միջոցները կենտրոնացված են եղել լուսամուտների և արևմտյան կողմում գտնվող մուտքի շուրջը։ Ուշագրավ են գմբեթային փոխանցման չորս առագաստները, որոնցից յուրաքանչյուրի վրա բարձրաքանդակային ոճով պատկերված է մեկական մարդկային դեմք։ Դրանք չնայած ունեն միմյանց նման շրջանաձև դիմամասեր և փոքր ու սրածայր մորուքներ, այդուհանդերձ օժտված են կերպարային տարբեր արտահայտություններով։ Կասկած չկա, որ դրանք չորս ավետարանիչների պատկերաքանդակներն են։ Բեմի ճակատային հարթությունը մշակված է եղել հյուսածո զարդաձևերով։ Արտաքինից լուսամուտների վերևներում տեղադրվել են զույգ գլանիկներից կազմված խաչեր, որոնց թևերը ավարտվել են շեղ գրված քառակուսիներով։

---

62 Արխիվային լուսանկարներից պարզ է դառնում, որ արևելյան և հարավային լուսամուտների չորս կողմում եղել են կորաթև խաչեր՝ հար և նման Նոր Վարագավանքի գլխավոր եկեղեցու արևելյան և հյուսիսային լուսամուտների հարդարանքին [Հ. Կ. Ք ա ր տ ա շ յ ա ն, Նոր Վարագավանքի ճարտարապետական համալիրը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 7, էջ 71)]։

63 Հովհաննես եպիսկոպոսը կառուցել է Զորաթան գյուղի եկեղեցին, որի մասին կա վիմագիր հիշատակություն (Մ ա կ ա ր Բ ա ր խ ու տ ա ր յ ա ն ց, Արցախ, էջ 328)։ Նրա ջանքերով են կառուցվել նաև Շամշադինի շրջանի Վերին Կարմիրաղբյուր և Բերդ գյուղերի եկեղեցիները, որոնք չեն պահպանվել («Արձագանք», 28. II. 1888, էջ 88)։

64 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 348։ Հարկ է նշել, որ ս. Ծզնավորի և բուն համալիրի միջև կա կոպտատաշ քարերով շինված մի մատուռ. Նրա շուրջը նույնպես հին գերեզմանատուն է, որտեղ կան պարզաձև խաչպատկերներով տապանաքարեր։

Ս. Ճգնավորից մի քանի մետր դեպի հարավ-արևմուտք ընկած է խոշորաչափ (3 մ երկարությամբ) թևավոր մի խաչքար, որն ամրացված է եղել պատվանդանի մեջ։ Այն, ամենայն հավանականությամբ, կանգնեցվել է Վանական Վարդապետի գերեզմանի վրա[65]։ Այս ենթադրության օգտին է խոսում այն հանգամանքը, որ անշուք տապանաքարերի հարևանությամբ գտնվող այդ խաչքարը բնորոշ է XIII դարին։ Խաչքարն իր կառուցվածքով մոնումենտալ է և իրականացված է որոշակի համաչափական սկզբունքով։ Նրա մակերևույթին քանդակված է ոչ բարդ հյուսածո ձևերով խաչպատկեր։ Վանականի մահարձանը գերազանց հարաբերակցության մեջ է եղել ս. Ճգնավորի հետ և կարևոր նշանակություն է ստացել Ճարտարապետական միշավայրի կազմակերպման համար։

Այսպիսով, Խորանաշատի Ճարտարապետական համալիրը իր ծավալատարածական հորինվածքով և հուշարձանների ինքնատիպ տեղադրությամբ առանձնահատուկ տեղ է գրավում հայկական նման համակառույցների շարքում։ Նրա մեծարժեք հատկանիշներից է ինչպես ազգային շինարարական ավանդույթների նոր մեկնաբանությունը, այնպես էլ քանդակագործության և կառուցողական արվեստի յուրովի համադրությունը։ Խորանաշատը հայտնի է նաև իր վարդապետարանով (բարձրագույն դպրոց), որը հայ իրականությանը տվել է մշակույթի ու գիտության բազում անվանի գործիչներ[66]։

АРХИТЕКТУРНЫЙ АНСАМБЛЬ ХОРАНАШАТА

ГРАЧЬЯ КАРТАШЯН

Резюме

Один из известных архитектурных ансамблей средневековой Армении—Хоранашат—находится в Шамшадинском районе, близ села Чинари. В монастырский комплекс входили три церкви: св. Аствацацин с притвором, св. Киракн и св. Чкнавор. Их строительство началось в первом десятилетии XIII в. и завершилось в первой половине того же века. Оно осуществлено известным ученым и педагогом Ванаканом Вардапетом. Ансамбль интересен оригинальными архитектурными и скульптурными решениями. В нем прослеживается влияние анийской архитектурной школы, а также своеобразное истолкование традиций народного строительного искусства. Отдельные сооружения ансамбля имеют особенные объемно-пространственные композиции и уникальные декоративные решения. Хоранашат является также одним из значительных очагов армянской культуры прошлого. В этом вардапетаране (высшая школа) получили свое творческое крещение многие известные летописцы и библиографы.

---

65 Այդ տեսակետի օգտին են արտահայտվել Ս. Ջալալյանցը (Սարգիս Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 161), Կ. Կոստանյանցը (Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, էջ 63), Մ. Բարխուտարյանցը (Մակար Բարխուտարյանց, Արցախ, էջ 324)։

66 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 806։